



Համարը թիվ 457-Ն
Տիպը Հրաման
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2015.08.03/20(532).1
Հոդ.208.11

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը Ֆինանսների նախարար
Ստորագրող մարմինը Ֆինանսների նախարար
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 13.08.2015

Ընդունման ամսաթիվը 07.07.2015
Ստորագրման ամսաթիվը 07.07.2015
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՄՈԴԵԼԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
21 հուլիսի 2015 թ.
Պետական գրանցման թիվ 11815293

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

7 հուլիսի 2015 թ.

թիվ 457-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՄՈԴԵԼԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին կետը, 8-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 14-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ.
 - 1) հանրային հատվածի կազմակերպությունները, հաշվի առնելով իրենց գործունեության առանձնահատկությունները, ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և ներկայացնելու նպատակով, սույն հրամանի 1-ին կետով հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելի հիման վրա

սահմանում են իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականությունը,

2) հանրային հատվածի կազմակերպությունները մշակում և մինչև հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման տարվան նախորդող դեկտեմբերի 5-ը համապատասխան պետական մարմնի հետ (եթե այդպիսին կա) համաձայնեցնում են իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության նախագիծը,

3) համապատասխան պետական մարմինները մինչև հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման տարվան նախորդող դեկտեմբերի 10-ը կազմակերպությունների՝ իրենց հետ համաձայնեցված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ներկայացնում են պետական կառավարման լիազոր մարմնի համաձայնեցմանը: Նույն ընթացակարգով է իրականացվում նաև հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունների կատարումը:

3. Ընդունել ի գիտություն, որ հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցը հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. հուլիսի 23-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 463-Ն հրամանով:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Գ. Խաչատրյան

[Հավելված](#)
[ՀՀ ֆինանսների նախարարի](#)
[2015 թ. հուլիսի 7-ի](#)
[թիվ 457-Ն հրամանի](#)

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(օրինակելի մոդել)

(հավելվածը խմբ. 20.10.17 N 523-Ն)